

3342

998

891.71

F-49

1912

43

11 հունիս 1922
Խմբագրության
Խմբագրություն

Բ. Ալեքսովից

891.71-2

Բ-49

ԴՐԱՄԱՅԻ ☆ ☆ ☆

☆ ☆ ՎԵՐՋԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Դրամա 1 արարուածով

1001
9/1278
Գ

Թարգմ. Ս. ԹՈՐՈՍԵԱՆԻ

891.71

Բ-49

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՈՒԱ» Մուղ. պեր. № 8.

1912

2011

Настоящая пьеса, подъ заглавіемъ „Конецъ Драмы“ переводъ С. Торосяна, разрѣшена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для представленія на сценахъ края. (Отзывъ Канцеляріи за № 21835—912). 8 октября 1912 г. Гор. Тифлисъ.

ԳՈՒԾՈՂ ԱՆՁԻՆՔ:

Ամուսինը:

Կինը: _____

Բեմը ներկայացնում է կաբինէտ, մի դռնով-
ծախ՝ գրասենդան. սլափի վրայ, հանդիսական-
ների դիմացը, հեռախոս:

ԱՄՈՒՍԻՆԸ, սաստիկ գոգուած քայլում է:
ԿԻՆԸ, ընկճւած, մտամոլոր, նստած է վո-
տերեան բազկաթոռի վրայ:

ԱՄՈՒՍԻՆԸ: — (Շարունակելով խո-
սակցութիւնը)... Եւ ահա, երբ ես մի
քանի անգամ կարդացի այս նամակը...
Երբ մի փոքր սթափւեցի այս սարսափի
տպաւորութիւնից, իմ առաջին քայլը
եղաւ—վերջ տալ կեանքիս: (Ունենում է
գրպանից ատրճանակը):

ԿԻՆԸ: — (Ցնցւում է. բարձրանում տե-
ղից, իսկ յետոյ ուժասպառ, ընկնում է
բազկաթոռի վրայ):

ԱՄՈՒՍԻՆԸ: — Բայց յետոյ միտքս
փոխեցի .. Ինչ զսպեցի... զգացի,

որ այս միակ (ձօձունք է ատրճանակը...) հաւատարիմ բարեկամս ու արդար դատաւորը, պիտի վճռէ մեր անիծեալ հարցը... Մենք երեքն ենք... ինչո՞ւ զոհողը պէտք է լինեմ ես... չէ՞ որ ես ամենից պակաս եմ յանցաւոր. ես մեղաւոր եմ միմիայն նրանով, որ հաւատում էի քեզ, հաւատում էի աւելի, քան որևէ մէկին... Միթէ երբեք ես խանդոտել եմ դէպի քեզ, Զինա... երբեք եմ անտեղի նկատողութիւն արե՞լ եմ... Միթէ ինձ բաւականութիւն չէր պատճառում, երբ հետաքրքրւում, զմայլում էին քեզանով... Ասա, ասա... քանի քանի անգամ ես ծիծաղել եմ, տեսնելով քո նազկէծելը, ծիծաղել եմ քեզ հետ միասին, սրտաբաց, առանց կասկածանքների... Չէ՞ որ ես անսահման հաւատ ունէի դէպի քեզ, դէպի քո սէրը... հաւատում էի և նրան, (դառնութեամբ...) բարեկամիս... Եւ ես տանջւում էի, որոնելով թէ մեր երեքիցս ո՞վ է ամենայնցաւորը: (կինը շարժում է անում): Օ՛, ոչ, ոչ Զինա, մեղաւորը դու չես... ոչ... Հիմա եմ հասկանում, թէ ինչպէս

խորամանկութեամբ, առանց շտապելու, քայլ առ քայլ նա նւաճեց քեզ... Նա զգոյշ է, քաղցրախօս, դարձանակալ, ինչպէս բոլոր դաւաճանները... նրան յաջողուել է շեշտել, աւելի վառ գոյնելով ներկայացնել իմ պակասաւոր կողմերը, և կանխակալ ու քնքոյշ լինել դէպի քո քմահաճոյքները... իսկ յետոյ... յետոյ, օգտուելով մեր անհամաձայնութեան որևէ մի դէպքով, համարձակօրէն առեկէ քեզ իր ձեռքը... այդպէս չէ՞ Զինա... այդպէս չէ՞...

Կի՛նԼ:— Այո՛... այո՛... չը դիտեմ... ներքի, ներքի ինձ... (ընկնում է ծնկաջոյճով):

ԱՄՈՒՍԻՆԼ:— (Ունշալիք դեպի նա): Ես մտածում էի, և եկայ այն եզրակացութեան, որ միակ մեղաւորը նա է... և այս դատաւորը (ձօձելով ատրճանակը) պէտք է վերջ տայ նրա կեանքին:

Կի՛նԼ:— Ո՛չ... ոչ... ես էլ եմ մեղաւոր... ես էլ... նա չէր կարող առանց ինձ... Օ՛, մի սպանիր նրան...

ԱՄՈՒՍԻՆԼ:— (Դառնութեամբ.) Ուրեմն, նշանակում է դու նրան սիրում ես... (պառաքալից յետոյ). Վեր կաց...

(բարձրացնում է հրան.) Եկ այստեղ... (մօտեցնում է հեռախօսին). Լսիր, թէ ի՞նչ պիտի անես... Ես գիտեմ, դու գրել ես նրան, որ ձեր սառը արարքը, բաց-ւել է, հետեապէս, նա անձամբ այս-տեղ չի գայ... Իսկ ես պահանջում եմ, դատաւորը պահանջում է (ձօճելով ա-տրճանակը.) որ նա այստեղ, իր յան-ցագործութեան տեղում շան նման սատուկի... դու կը կանչես նրան հե-ռախօսի մօտ... նա շատ մօտ է... կը կրկնես այն ամենը, ինչ որ քեզ կը թելադրեմ... նա կը գայ... կ'ընկնի քո գիրկը... և այն ժամանակ, կ'իրա-գործուի արդար դատաւճիւր:

ԿԻՆԸ:—(Մեկաջոք). Ո՛չ, ո՛չ... դու այդքան անգութ չես... Խնայիր, խնա-յիր ես անկարող եմ...

ԱՄՈՒՍԻՆԸ:—Եթէ դու նրան սի-րում ես այնքան, որ պատրաստ ես նրա փոխարէն մեռնելու—ինչպէս կա-մենաս. այն գնդակը, որ պատրաստել եմ նրա համար կարող եմ քեզ հրամ-ջնել: (Նշան է անում). Հասկանա՞ւ ես...

ԿԻՆԸ:—(Վելք է կենում. վճռակամ.) Ի՞նչ ես ուզում ինձանից... ինչ պէտք

է ասեմ նրան... Օ՛ տէր-իմ Աստուծ, ներիր, ներիր ինձ...

ԱՄՈՒՍԻՆԸ:—Ահա թէ ի՞նչ. ես այդ քոլորովին չէի սպասում... Օ՛, որքան սխալ եմ ըմբռնել քեզ, ինչպէս խար-ւել, լիմարացել եմ... Այժմ տեսնում եմ, որ դու սիրում ես միմիայն քեզ... Դու զո՞ քերիր ինձ, իսկ այժմ էլ փրկութեանդ համար, զոհաբերում ես և նրան... կանչիր նրան իսկոյն ևեթ հեռախօսի մօտ, շուտ... ասա, որ ինձ անհրաժեշտ գործով կանչեցին... որ դու հիւանդ ես... որ կարոտել ես նրան... որ դու տենչում ես նրա փա-զաքշանքներին... նրա համբոյրներին...

ԿԻՆԸ:—Իսկ եթէ ես... եթէ ես...

ԱՄՈՒՍԻՆԸ:—Ի՞նչ...

ԿԻՆԸ:—Իսկ եթէ ես աղաղակեմ... աղաղակեմ, որ նա փախուստ տայ այստեղից... դուքս փախչի քաղաքից... յայտնեմ, որ դու պատրաստում ես նրան սպանել...

ԱՄՈՒՍԻՆԸ:—(Քռնելով նրա ձեռքե-րը, քաշում է դէպի ինքը. սպառնալի). Դու այդ չես անիլ... լսում ես... այս փողը շարունակ ուղղուած կ'ընի քո

քոնքին, բաւական է արտասանես մի
երկդիմի խօսք, և ես կարձակեմ... Ո՛հ,
դու չես յայտնի, չես ասիլ... դու քեզ
չափազանց ես սիրում... գնահատելի
ԿԻՆԸ:—Օ՛ տէր-իմ Աստուած... օգ-
նիր ինձ... ներիր ինձ... (զսկզպա-
րում է...) 345-40...

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Ատրճանակը ուղղում
է կնոջ քոնքին. հետախօսի խողովակը
մի փոքր հեռացնում է նրա ականջից,
որպեսզի պատասխանը լսելի լինի եւ
իրեն) Դէ խօսիր... խօսիր...

ԿԻՆԸ:—Այդ դժու ես... դժու... Տօլ-
եա... գիտեմ ինչ... մեկնեց... Ալեօշան
մեկնեց... Խնչ... այո... այո... ես միայ-
նակ եմ... բոլորովին միայնակ... ինձ
վատ եմ զգում... այո... այո... ցանկա-
նում եմ քեզ տեսնել... շատ... (շու-
կով ամուսնունք...) Թող, Թող ինձ...

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Ականջ է դնում սի-
րականի խօսակցութեանը. շուկով) Ա՛,
նա ինչպէս սիրալիր է... քեզ անւա-
նում է ճերմակիկ... ճերմակիկ... այո,
այո... ճիշտ է... դու բոլորովին սպի-
տակ ես... հանւած ժամանակ... Դէ, պա-
տասխանիր... պատասխանիր նրա փա-

ղաքանքներին փաղաքանքներով...

ԿԻՆԸ:—Խնայի՛ր... խնայի՛ր... ես չեմ
կարող...:

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Նսրից մօտեցնում է
ատրճանակը նրա քոնքին) Դէ, խօ-
սիր... եթէ ոչ... (շուկով քելադրում է...)

ԿԻՆԸ:— (Շարունակ խօսում է ընդ-
նատ-ընդհատ, երբեմն բռնաւորում, այն-
պէս, որ ամուսինը ստիպւած է լինում
բռնել...) Ես այնպէս... տխուր եմ... ա-
ռանց քեզ... այո... այո... և գիշերը...
ի հարկէ, կը մնաս և գիշերը... ես
այնպէս կարօտել եմ քո փաղաքանք-
ներին... իմ թանկագինս... այո...
այո... ես փոքր ինչ տկար եմ... դու
կը մխիթարես ինձ... ճիշտ ես ասում,
կը գտնու... սիրելիս... իսկոյն... այո...:

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Նշում է հետախօսի խո-
ղովակը եւ շտապ կախում) Բաւական է...

ԿԻՆԸ:— (Ուժասպառ, ընկնում է բազ-
կաքոռի վրայ):

ԱՄՈՒՍԻՆԸ:— Հրաշալի կատարեցիր,
հիանալի... աղանեակդ իսկոյն կը
թռչի, կը գայ... հիանալի է... (ուժգին
ծիծաղում է...) Օ՛, ստոր, ստոր արա-
րած... այժմ դու ծախեցիր երկու-

սիս.... և ինձ, և նրան. (մտախոհ.)
երկուսիս էլ... այո... երկուսիս էլ.
(պառուզա.) Այժմ դժւ ինչ կասես, ար-
դար դատաւոր: (յառում է աջքերը ա-
տրճանակի վրայ):

ԿԻՆԸ:— (Ինչ որ չարիքի նախագա-
ցումով դրդւած, արագ ու նեարդային
շարժումով ցատկոսւմ է ու ամուսնու
առջէն ընկնում ծնկաջոք). Ես քո հրա-
մանները կատարեցի ճշտութեամբ, իմ
տէր, ես կը քաւեմ իմ քո վերաբեր-
մամբ կատարած բոլոր մեղքերս... կը
լինեմ քո հաւատարիմ և խոնարհ կի-
նը... իմ ամբողջ կեանքում, ընդ-
միջառ...

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Մտախոհ): Այո...
այո... ի հարկէ .. ես համոզւած եմ...

ԿԻՆԸ:—Մի նայիր այդպէս ինձ վի-
րայ... ես սարսափում եմ... տեսնում
ես ինչպէս հնազանդեցի քո կամքին...
Չէ՞ որ այդ մի դժբախտ երագ էր...
չէ՞ որ ես քեզ եմ սիրում... քեզ, մի-
միայն քեզ...

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Անուշադիր դեպի նա).
Ծախեցիր երկուսիս էլ... ոչ մէկիս
չես սիրել... ոչ մէկիս... երբէք...

ԿԻՆԸ:— (Անհանգստութիւնը աճում է.)
Գարոյ եմ ես այժմ հեռանալ... Թող
տուր, թանկագինս... մի ստիպիր ինձ
վկայ լինել այն արդար պատժին, որը
դու ծրագրել ես...

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Վեր է կենում. վրձ-
նական.) Դու չես հեռանայ... և ոչ մի
պատժի վկայ չես լինի...

ԿԻՆԸ:— Ինչպէս... նշանակումէ, վը-
ճիռդ փոխեցի՞ր...

ԱՄՈՒՍԻՆԸ:— Դատաւորը (ձօնելով
ատրճանակը.) փոխեց իր դատաւճի-
ռը... պարզեց մի աւելի մեծ յան-
ցանք... մի անհերելի յանցանք...

ԿԻՆԸ:— (Յսնկարժ ամեն ինչ հաս-
կանալով.) Օ... դու միայն ինձ ես
վախեցնում, այդպէս չէ՞... ասան, դու
կը ինչայես ինձ... այդպէս չէ՞... ին-
չո՞ւ, ինչո՞ւ համար... չէ՞ որ կատարե-
ցի քո բոլոր հրամանները, լոկ քեզ
համար...

ԱՄՈՒՍԻՆԸ:— (Անուշադիր.) Դու,
այո միմիայն դու ես, որ չուես ոչ մի
սրբութիւն... խաբում էիր ամուս-
նուդ... խաբում ես սիրականիդ... կը
խաբես զարձեւտ տանեակ սիրական-

Ներքի... այն դու ես, իսկ ե իսկ դու...
(կսնդնում է դռներում կապելով նրա
ձանապարհը):

Լսու՛մ ե ուժգին գանգամարութիւն:

ԿԻՆԸ:—(Սարսափանալ ընկնում է
այս ու այն կողմը.) Ո՛չ, ոչ... անկա-
րելի է... հապա խնչու ստեցի... ինչո՞ւ
կանչեցի նրան... ա՛հ նա հկել է...
լսում ես... շուտով կը յագեցնես, կը
հանես քո վրէժը... ա՛հ նա գալիս
է... նա գալիս է... չէ որ քեզ համար
կանչեցի նրան... Օ՜ ճ խնայի՛ր... խնայ-
ի՛ր... ես կը գոռամ...

ԱՄՈՒՍԻՆԸ:—Ո՛չ, ոչ ուրիշը... այլ
դու, միմիայն դու...

ԿԻՆԸ:—(Աղաղակելով.) Եկէ՛ք, ե-
կէ՛ք... օգնեցէ՛ք... օգնե՛ք...

ԱՄՈՒՍԻՆԸ:—(Արձակում է ատրճա-
նակը.) Դատաւորը արգարադատ է...

ԿԻՆԸ:—(Մի քանի վայրկեան տա-
տանում է, ահովում ձեռքերը կրծքին,
յետոյ անզգալ ընկնում է ամուսնու
ուտքերի մօտ):

